ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 559-Ա « 24 » փետրվարի 2025թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ՍՁ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 30.09.2024 թվականին կնքված հ.ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/264-1 ծածկագրով (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել սույն Պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և սահմանված կարգով վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2-րդ Հավելվածով ապրանքի մատակարակման ժամանակացույցի համաձայն ժամկետը սահմանված է եղել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

Նույն Հավելվածի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարումը Վաճառողի կողմից պատշաճ իրականացվել է, իսկ 1-ին չափաբաժնով նախատեսված պարտավորությունը չի կատարվել:

Համաձայն Պայմանագրի 8.5 և 8.8 կետերի, 2024 թվականի դեկտեմբերի 17-ին Վաճառողի և Գնորդի միջև կնքվել է Համաձայնագիր՝ այն մասին, որ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, մինչև 2025 թվականի հունվարի 18-ը ներառյալ, սակայն վաճառողի կողմից 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարում կրկին չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է այն:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Հաշվի առնելով այն, որ Վաճառողի կողմից խախտվել են «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում 2025 թվականի փետրվարի 12-ին: Պայմանագիրը 2025 թվականի փետրվարի 13-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով.

1. «ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ